13363

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 03 » 11 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0209-21

Ձեռնարկողը՝ ***«Արքարարտ» ՍՊԸ***
Կոտայքի մարզ, գ. Արամուս 3-րդ փ. տ.41

Գործունեությունը՝ ***Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0209-21

<03> 11 2021թ.

Կամարիսի բազալտի հանքավայրի երկրորդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Արքարարտ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Արամուս համայնք

Ներածական մաս. Կամարիսի բազալտի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի Արամուս համայնքի վարչական տարածքում: Առաջին տեղամասը տեղադրված է Կամարիս գյուղից 1,5կմ հարավ, երկրորդ տեղամասը տեղադրված է նույն գյուղից 1,5կմ հարավ-արևմուտք: Երկու տեղամասերն էլ գտնվում են Աբովյան քաղաքից համապատասխանաբար 12 և 10կմ հեռավորության վրա:

«Արքարարտ» ՍՊԸ–ին տրամադրվող տարածքը զբաղեցնում է 10,6հա մակերեսով տարածք:

Արդյունահանման նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կամարիսի հանքավայրի բազալտների պաշարներն A+B+C1 կարգերով 357.9 հազ,մ^3 քանակով հաստատվել են ՀՍՍՀ ՊՏՀ-ի 29.06.1982թ. N260 որոշումով: 2-րդ տեղամասում պաշարները հաստատված են 2739,8հազ.մ^3, այդ թվում A – 267,3; B – 897,2; C1 – 1575,3: Պաշարները հաստատված են ՀՍՏ 1102-79 ստանդարտներին համապատասխան շինաքար ստանալու համար, իսկ դրանց արդյունքում առաջացող թափոնները շինարարական խճի (ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95) արտադրության համար: Շինաքարի ելքը համաձայն պաշարների պետական հաշվեկշռի կազմում է 19,5%:

Հայցվող տեղամասի ճշգրտված կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով .

1. 8470460, 4454556
2. 8470415, 4454948
3. 8470486, 4455112
4. 8470644, 4455031
5. 8470635, 4454572

Ելնելով հանքավայի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից նախագծում ընդունված են հանքադաշտի հետևյալ պարամետրերը.

- հանքադաշտի առավելագույն երկարությունը մակերևույթի վրա - 550մ,
- հանքադաշտի առավելագույն լայնությունը մակերևույթի վրա - 225մ,
- հանքադաշտի մակերեսը մակերևույթի վրա - 106000մ^2, (10,6հա),
- բազալտների մշակվող միջին հզորությունը – 7,28մ,
- բացահանքի առավելագույն խորությունը (ամենաբարձր և ամենացածր նիշերի միջև եղած տարբերությունը) – 25մ,
- բազալտների հաշվեկշռային պաշարների քանակը – 897,0հազ.մ^3,
- բազալտների կորզվող պաշարները – 838000մ^3,
- մակաբացման ապարների ծավալը – 203000մ^3.

-Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 44957մ^3 մարվող և 42000մ^3 արդյունահանվող բազալտի զանգված:

Սույն նախագծով նախատեսվում է հանքավայրի շահագործումն իրականացնել բաց լեռնային աշխատանքներով:

Բացահանքի շահագործման ժամանակ նախագծային կորուստները որոշվում են ըստ 2 խմբերի:

-Շահագործողական կորուստներ: Տվյալ դեպքում նրանք կանխորոշվում են արդյունահանման տեխնոլոգիայից և ընդունվում են 5800մ^3 (0.65%): Ըստ լեռնատեխնիկական պայմանների, կախված օգտակար հաստաշերտի տեղադրման եզրագծի բարդության աստիճանից և անկման անկյունից: Դրանք այն կորուտներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ կորուստները կազմում են (897000-838000) : 897000 x 100 = 6.6%:

Մակաբացման ապարների ընդհանուր ծավալը կազմում է 203000մ^3: Մինչև 1560մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը մակաբացման ապարները 51800մ^3 ծավալով /շահագործման 4-րդ տարին ներառյալ/ տեղափոխվում է բացահանքի հյուսիս-արևմտյան մասում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտ: 1560մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց իրականացվում է ներքին լցակույտաառաջացում: Ներքին լցակույտ են տեղափոխվում նաև արտաքին լցակույտի ապարները և հարթեցվում են: Արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 0,9 հա: Լցակույտաառաջացումը բուլդոզերային է:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է КО-309 /ГАЗ-5312/ մակնիշի ջրցան-լվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ШН-БЦБ -1.4 ջրի ցիստեռնով: Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրահեռացնող կառուցվածքներ չեն

նախատեսվում:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու են բացահանքի շահագործման ավարտից հետո: Լցակույտում մնացած 550մ³ ծավալը, կտեղափոխվի հատակի հանքաստիճանների վրա, կլցվի 1.0մ բարձրությամբ և կհարթեցվի: Հարթեցումը կատարվում է ԴՅ- 170.1 բուլդոզերի օգնությամբ:

Թափոններն առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում: Հնամաշ մեխանիզմների դետալներն ու մասերը կուտակվում են առանձին տեղում և հանձնվում են, որպես մետաղի ջարդոն: Կենցաղային աղբը տեղափոխվում է մոտակա աղբահավաք կետ:

Հարթեցումը կկատարվի բացահանքերի ողջ մակերեսով՝ 9.6հա, արտադրական հրապարակը 250մ², ավտոճանապարհները՝ 5500մ², ինչպես նաև նախկինում տեղադրված արտաքին լցակույտի մակերեսը՝ 9000մ²: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 110500մ²: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի՝ 1513700 դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150 հազ.դրամ գումար:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար տարեկան կծախսվի 150000 դրամ գումար:

Արամուսի բազալտի հանքավայրի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Բուն հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա և ապրելավայրեր:

Պատմության և մշակույթի հուշարձանների հողերի և հայցվող տարածքի միջև հեռավորությունը կազմում է ավելի քան 2,5կմ:

Բացահանքի աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր, ուղղված մթնոլորտային օդի, հողային, ջրային, ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրական 2 անգամ),
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,

- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբավայր պայմանագրային հիմունքներով, նախօրոք համաձայնեցնելով համայնքապետարանի հետ,
- կեղտաջրերի հավաքում սեպտիկ հորում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
- խախտված տարածքների վերականգնում /ռեկուլտիվացիա/:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արքարարտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Կոտայքի մարզի Կամարիսի բազալտի հանքավայրի երկրորդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ գլխ. մասնագետ Հ. Մեսրոպյան

Ընդամենը՝ 5 էջ